ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2

ք. Երևան «31» դեկտեմբերի 2022 թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արամ Հարությունի Առաքելյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ճարտարապետ խորհրդատուի** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6 000 000 (վեց միլիոն)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ՀՎՀՀ՝ 02506264	Արամ Հարությունի Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 21շ., բն. 3 ՀԾՀ՝ 2204720178 «ՀԱՅԲԻԶՆԵՍ ԲԱՆԿ» ՓԲԸ h/h 1150012731071027
Ս. Գևորգյան /ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն)

Հավելված N 1
« 31 » հունվարի 2022թ. կնքված
***ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
2	85311210/504	**ճարտարապետ խորհրդատու**	դրամ	6 000 000	1	ՀՀ ք. Երևան	Ուժի մեջ կլինի Համաձայնագրի ստորագրման օրվանից սկսած 60 աշխատանքային օրվա ընթացքում

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Քրեակատարողական նոր հիմնարկի ճարտարապետական-նախագծային աշխատանքների **ճարտարապետ խորհրդատու**

;խնիկական աջակցության տեսակ	Խորհրդատու՝ ֆիզիկական անձ
սռայությունների հակիրճ արագրություն	Քրեակատարողական նոր հիմնարկի երկու այլընտրանքային նախագծի մշակում (1), մոդելավորում (2), ըստ ներկայացված տեղադիրքի (երի) տեխնիկական նախնական գծագրի (էսքիզի) մշակում (3), ինչպես նաև 3D ձևաչափով քրեակատարողական նոր հիմնակի մոդելի ներկայացում (4):
,ռայությունների մատուցման ,ամանակահատված	Պայմանագրի կնքման պահից սկսած 60 աշխատանքային օր

I. Ծառայությունների անհրաժեշտությունն ու նպատակը

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարությամբ հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման ,այմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է փակել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և

Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում կկառուցվի շուրջ 1200 լրակազմ ունեցող ռեակատարողական նոր հիմնարկ: Նախաձեռնության իրականացման արդյունքում Երևան քաղաքի վարչական տարածքում կկառուցվի միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր քրեակատարողական հիմնարկ՝ ընդգրկելով նաև ստացիոնար հիվանդանոց:

Վերոգրյալի հաշվառմամբ ՀՀ արդարադատության նախարարության կողմից դիտարկվում է նոր և միջազգային ստանդարտներին համապատասխանող, **շուրջ 200 ազատությունից զրկված անձ պահելու հնարավորություն ունեցող** քրեակատարողական հիմնարկի կառուցման հնարավորությունը, ինչը տնտեսական արդյունավետության տեսանկյունից ևս առավել նպատակահարմար է:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ նոր քրեակատարողական հիմնարկը պետք է բարելավված լինի ինչպես շենքային պայմանների, այնպես էլ հիմնարկի կառավարման և ազատությունից զրկված անձանց հետ վարվելակերպի տեսակետից:

Այդպիսով՝ նոր քրեակատարողական հիմնարկը նախատեսվում է կառուցել և գործարկել միջազգայնորեն ընդունված բոլոր չափանիշների հաշվառմամբ:

Կառուցվող նոր քրեակատարողական հիմնարկի հիմնական խնդիրը պետք է լինի Երևան քաղաքի համար կալանավորվածների պահելու վայրի ապահովումը, ինչպես նաև բուժական ուղղիչ հիմնարկի, այսինքն՝ ստացիոնար պայմաններում բուժման ապահովումը: Հաշվի առնելով մերձավոր ազգականների հետ երևանաբնակ դատապարտյալների կապի ապահովման հարցը՝ հնարավոր է որոշակի տեղեր հատկացնել նաև մյուս ռեժիմների, այն է՝ փակ, կիսափակ, կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկների համար:

Բացի այդ, հարկ է նշել, որ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Իրավունք և արդարադատություն» վերտառությամբ 5-րդ բաժնի «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ» վերտառությամբ 5.6-րդ գլխում կարևորելով ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը՝ ընդգծվել է, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում. արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման վանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը:

Վերոնշյալ ռազմավարական նշանակության թիրախին հասնելու համար, ի թիվս այլնի, պետք է ձեռնարկվել քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների և կալանավորված անձանց վերաինտեգրման, արտախցային զբաղվածության խթանման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր:

Այս համատեքստում հարկ է նշել, որ 2000-ական թվականներից սկսած քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց զբաղվածությունը ապահովվում էր «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջոցով: Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝ դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովումը, քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացումը, քրեակատարողական հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների բարելավումը, քրեակատարողական ծառայության աշխատողների կրթական մակարդակի բարձրացումը, դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացումը: Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ ստեղծումից ի վեր Հիմնադրամն իր վրա դրված հիմնադրական նպատակները ողջ ծավալով և արդյունավետ կերպով փաստացի չի իրականացրել, ինչի արդյունքում նախատեսվում է դադարեցնել վերջինիս գործունեությունը:

Նշված խնդիրներին համալիր լուծում տալու նպատակով առաջացել է **ճարտարապետ խորհրդատու** ներգրավելու անհրաժեշտություն: Վերջինիս գործառույթները ներառում է քրեակատարողական նոր հիմնարկի երկու այլընտրանքային նախագծի մշակում (1), մոդելավորում (2), ըստ ներկայացված տեղադիրքի (ի) տեխնիկական նախնական գծագրի (էսքիզի) մշակում (3), ինչպես նաև գծագրի 3D ձևաչափով քրեակատարողական նոր հիմնարկի մոդելի ներկայացում (4):

II. Ծառայությունների նկարագիրը.

1. Մշակել քրեակատարողական նոր հիմնարկի երկու այլընտրանքային նախագիծ՝ ըստ քրեակատարողական նոր հիմնարկի գործունեության համար մշակված հայեցակարգի, ինչպես նաև տեղադիրքի (երի):
2. Մոդելավորել և մշակել տեխնիկական նախնական գծագիր (եր) (էսքիզ):

3. Ըստ էսքիզի և գծագրի՝ պատրաստել և ներկայացնել գծագրված նոր քրեակատարողական հիմնարկը՝ 3D ձևաչափով:

4. Ըստ անհրաժեշտության՝ մասնակցել ազգային և միջազգային փորձագետների հետ հանդիպումներին, ներկայացնել կարծիքներ, դիտարկումներ և մասնագիտական եզրահանգումներ:

5. Ըստ անհրաժեշտության՝ ներկայացնել նախնական, միջանկյալ և վերջնական հաշվետվություններ Նախարարություն պատասխանատու ստորաբաժանման խմբին:

III. Ծառայության մատուցման ժամանակացույցը.

Ծառայությունների արդյունքը	Ներկայացման վերջնաժամկետը
Քրեակատարողական նոր հիմնարկի երկու այլընտրանքային նախագիծ՝ ըստ տարբեր տեղադիրքերի	Պայմանագրի կնքման պահից սկսած 40 աշխատանքային օրվա ընթացքում
Արդարադատության նախարարության ներկայացուցիչների դիտարկումների հիման վրա լրամշակված նախագծի վերջնական տարբերակ	Դիտարկումները ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում
Մոդելավորում և Տեխնիկական նախնական գծագիր՝ էսքիզ	Պայմանագրի կնքման պահից սկսած 40 աշխատանքային օրվա ընթացքում
Արդարադատության նախարարության ներկայացուցիչների դիտարկումների հիման վրա լրամշակված մոդելավորման և տեխնիկական նախնական գծագրի վերջնական տարբերակ	Դիտարկումները ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում
3D ձևաչափով քրեակատարողական նոր հիմնարկի մոդելի ներկայացում	Մոդելավորված տարբերակը և էսքիզը ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում
Արդարադատության նախարարության ներկայացուցիչների դիտարկումների հիման վրա լրամշակված 3D ձևաչափով քրեակատարողական նոր հիմնարկի մոդելի վերջնական տարբերակ	3D ձևաչափով քրեակատարողական նոր հիմնարկի մոդելի վերաբերյալ դիտարկումները ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում
Հակիրճ ամփոփաթերթի (memorandum) և/կամ PowerPoint սլայդերի (presentation) նախագիծ	3D մոդելի ներկայացումից 2 աշխատանքային օրվա ընթացքում
Արդարադատության նախարարության ներկայացուցիչների դիտարկումների հիման վրա լրամշակված հակիրճ ամփոփաթերթի (memorandum) և/կամ PowerPoint սլայդերի (presentation) վերջնական տարբերակ	Դիտարկումները ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում

IV. Խորհրդատուի թեկնածուին ներկայացվող պահանջները.

Հայաստանում բնակելի, արտադրական և/կամ այլ շինությունների համար ճարտարապետական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձ.

Արտերկրում ճարտարապետական աշխատանքի փորձը խրախուսելի է.

Քրեակատարողական հիմնարկների կամ այլ փակ հաստատությունների համար ճարտարապետական մասնագիտական գործունեությունը խրախուսելի է.

Ճարտարապետական նախագծեր մշակելու, դրանց նորմատիվների և նախագծերի վերաբերյալ ոլորտային օրենսդրությանը տիրապետելը պարտադիր է.

Հայերեն և անգլերեն բանավոր և գրավոր անթերի տիրապետում, ռուսերենի իմացությունը նախընտրելի է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ԳՀՀՀ՝ 02506264	Արամ Հարությունի Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 21շ., բն. 3 ՀԾՀ՝ 2204720178 «ՀԱՅԲԻԶՆԵՍ ԲԱՆԿ» ՓԲԸ h/h 1150012731071027
Ս. Գևորգյան /ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն)

Հավելված N 2
« 31 » հունվարի 2022թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

...հաք ...ծնի ...մարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	85311210/504	ճարտարապետ խորհրդատու	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%

...արման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ...տնակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
...ավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02506264

_______________ Ս. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Արամ Հարությունի Առաքելյան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ,
Տիգրան Մեծի 212., բն. 3
ՀԾՀ՝ 2204720178
«ՀԱՅԲԻԶՆԵՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 1150012731071027

(ստորագրություն)

Հավելված N 3
« 31 » 01 2022թ. կնքված
***ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«31» 01 2022թ. կնքված
***ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 31.01.2022թ. N ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան « 18 » փետրվարի 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արամ Հարությունի Առաքելյանը, ով գործում է իր անունից (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», հիմք ընդունելով կողմերի միջև 31.01.2022թ. կնքված N ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնեցին հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2.2 Սույն համաձայնագրում չնշված, Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011018547 ՀՎՀՀ՝ 02506264 Ս. Գևորգյան /ստորագրություն/ Կ.Տ	Արամ Հարությունի Առաքելյան ՀԾՀ՝ 2204720178 ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 21շ., բն. 3 ''Հայբիզնեսբանկ'' ՓԲԸ Հ/Հ 1150012731071027 Հեռ. 094 044540 Ա. Առաքելյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 18 » փետրվարի 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի
31.01.2022թ. կնքված N ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-22/19-2
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	85311210/504	ճարտարապետ խորհրդատու		3000000	3000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	**6000000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

Ս. Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Արամ Հարությունի Առաքելյան
ՀԾՀ՝ 2204720178
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ,
Տիգրան Մեծի 21շ., բն. 3
''Հայբիզնեսբանկ'' ՓԲԸ
Հ/Հ 1150012731071027

Ա. Առաքելյան
/ստորագրություն/
Կ.Տ